ՀՀԿԳՆ հետ N - Ա-6/18-12 պայմանագրով իրականացվող «Փորձարարական մանկավարժական ծրագրերի իրականացում հանրակրթությունում» ծրագրի 2012թ. հուլիս-սեպտեմբեր ամիսների հաշվետվություն

Նախագիծ

1. *Հանրակրթության պետական նոր չափորոշչի պահանջներին համապատասխան կրթահամալիրում իրականացվող «Ստեղծողի դպրոց. անհատի կրթական պատվեր. մեդիահանրակրթություն» պետական այլընտրանքային (հեղինակային) կրթական ծրագրի չափորոշչի, ըստ չափորոշչի՝ ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի, սովորողի ուսումնական առաջադիմության գնահատման համակարգի մշակում*

Մշակվել է 2012-2013 ուսումնական տարվա **ուսումնական օրացույց**ը, որով կազմակերպվում է ուսումնական տարին: Կրթական ծրագրերի սովորողների, ծնողների, մանկավարժական աշխատողների ամառային առցանց քննարկումների արդյունքում արվել են 2012-2013 ուստարվա ուսումնական պլանների և դրանց պարզամբանումների լրացումներ, մշակվել (փոփոխվել) են ուսումնական պլանով նախատեսված՝ ուսուցման կազմակերպման կարգերը:

«Ստեղծողի դպրոց. անհատի կրթական պատվեր. մեդիահանրակրթություն» պետական այլընտրանքային (հեղինակային) կրթական ծրագրերի մշակման աշխատանքին հուլիս-սեպտեմբեր ամիսներին մասնակցել են կրթահամալիրի բոլոր մանկավարժական աշխատողները՝ մշակման առարկայական ծրագրերի, կրթական ծրագրի, ուսումնական միջավայրի կազմակերպման պահանջների, կարգերի և այլ մեթոդական մշակումների աշխատանքն արվել է mskh.am սոցիալական ցանցում (էլփոստ և mskh.am) անընդհատ քննարկելով: Նախադպրոցական, տարրական, հիմնական, միջնակարգ հեղինակային կրթական ծրագրերի համակարգողները ղեկավարել են աշխատանքը, կազմակերպել քննարկումները mskh.am-ում և կրթահամալիրի փոստի Sky Driv-ում առանձնացված տարածքներում, ծրագրերի ներքին փորձաքննություն են իրականացրել: Հրապարակված արդյունքներին կարող եք ծանոթանալ mskh.am-ում:

2. *Կրթահամալիրի, դպրոցի, դասարանի, խմբի, սովորողի ուսումնական գործունեության, ուսումնական պարապմունքի արդյունավետության գնահատման էլեկտրոնային համակարգի ամբողջացում, էլեկտրոնային մատենավարության ամբողջական ներդրում*

2011-2012 ուսումնական տարում էլեկտրոնային մատենավարության ամբողջական ներդրման ուղղությամբ արվել է բավարար աշխատանք, մշակվել, քննարկվել են վարման կարգերը, փորձարկվել են սովորողների հաճախումների և ուսումնական գործունեության արդյունքների գրանցման էլեկտրոնային մատյանները, դպրոցներում ստեղծվել են սովորողների մասին տեղեկությունների էլեկտրոնային բազաներ, դպրոցներում գործում են ուսումնական մոդել կաբինետները: Սովորողի ուսումնական գործունեության մասին

ամբողջական ամենօրյա տեղեկատվությունը համացանցի միջոցով և սովորողի էլեկտրոնային անձնական գործը նախատեսված են սովորողների ծնողների հետ կնքված ուսումնառության նոր պայմանագրերով: Ամբողջացվել և 2012-2013 ուսումնական տարվանից կրթահամալիրի տնօրենի հրամանով ներդրվել է «Փաստաթղթերի վարման, տրման, տեղեկանքների և փաստաթղթերի պատճենների տրման մասին» նոր կարգը, որով կրթահամալիրի դպրոցներում գործող դասարանների և խմբերի ուսումնական աշխատանքը էլեկտրոնային գրանցում է ստանում. ստեղծվել և գործում են դասարանների, խմբերի էլեկտրոնային նոր մատյանները: Ստեղծվել է կրթահամալիրի փաստաթղթերի ֆոնդը, որտեղ պահվում են կրթահամալիրի աշխատողների, դպրոցների սովորողների թղթային գործերը: Կրթահամալիրում ստեղծվող փաստաթղթերը պահպանվում և աշխատողներին, սովորողներին, ծնողներին փոխանցվում են, տեղեկանքները տրվում են էլեկտրոնային եղանակով. փաստաթուղթը ոչ էլեկտրոնային լրացվում է, երբ սովորողը, աշխատողը գնում են, նրանց պահանջով: Հեղինակային կրթական ծրագրի աշնանային 7-րդ ստեղծագործական հավաքին ներկայացվել է 2012-2013 ուսումնական տարվա մատյանները ըստ դպրոցների, սովորողների մասին տեղեկատվական բազաների կառուցվածքը: Որպեսզի ծնողները ուսումնառության պայմանագրով իրենց ստանձնած պարտականությունը կարողանան կատարել՝ հետևելով սովորողների ուսումնական աշխատանքին համացանցում, ստեղծվել է էլեկտրոնային մատենավարության ուսուցման մոդուլ, որը դասվարները, կազմակերպիչները կիրառում են իրենց դասարաններում՝ լրացնելով ծնողների անհրաժեշտ մեդիահմտությունների պակասը:

Ստեղծվել է կրթահամալիրի գնահատման նոր ծառայությունը՝ mskh.am-ում իր բաժնով, հաստատվել են գնահատման գործիքներն ու ժամանակացույցը: Ծառայությունը ուսումնական տարվա սկզբից սկսել է կրթական ծրագրերի ուսուցման կազմակերպման ուսումնասիրությունները, որոնց արդյունքները ներկայացվում են մասնաժողովին:

3. Մեդիահանրակրթության սովորողների, դասավանդողների առողջության պահպանման ծրագրի մշակում և ներդրում

Շարունակվում է տարվա առաջին կեսին սկսված աշխատանքը, նոր ուսումնական տարվա համար մշակվում է սովորողների, աշխատողների առողջության պահպանման աշխատանքի նախագիծ:

4. Համացանցում դասավանդողների և սովորողների անհատական էջերի (բլոգների) գործարկում՝ որպես ուսումնական տարածք. սովորողների հեռավար ուսուցում: Ուսումնական նոր կայքի, ենթակայքերի, էլեկտրոնային պարբերականների (Լուսաստղ, ART-mskh) ստեղծում

Ամառվա ամիսներին ստեղծվեցին դասավանդողների, դասարանների, խմբերի, սովորողների նոր բլոգները. կրթահամալիրի դասավանդողներից յուրաքանչյուրը

մասնակցում է առնվազն մեկ բլոգի վարման աշխատանքի: Բլոգները դառնում են ուսուցման փորձի փոխանցման արդյունավետ միջոց:

Կրթահամալիրի պաշտոնական կայքը՝ mskh.am-ը՝ իր բոլոր ենթակայքերով, հուլիսի վերջին ենթարկվեց ադրբեջանական հաքերային հարձակման. օգոստոսը հիմնականում նվիրվեց կայքի և ենթակայքերի, ամսագրերի վերականգնմանը: Չնայած դրան mskh.am-ը մշտապես եղել է հասանելի և կրթական կայքերի մեջ առաջատարը, պատանեկան «Լուսաստղ» ամսագիրը աշխատել է ամռան ամիսներին: mskh.am-ում սկսել են իրականացվել նոր նախագծեր (Նոր ռադիո, Աուդիոակումբ, Ֆոտոակումբ, Կինոակումբ, Մեր գազանանոցը և այլ):

5. Կրթահամալիրում իրականացվող հանրակրթական, արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրերը, որպես տեխնոլոգիական կրթության (կարողությունների ձևավորում և զարգացում) տարբեր մակարդակներ. ուսումնական կարգերի, ծրագրերի լրամշակում ՀՀ օրենքով կրթության պետական սկզբունքների ապահովման նպատակով

Կրթահամալիի ուսումնական մասնաշենքերում անլար ինտերնետով ամբողջ ուսումնական տարածքը, այդ թվում՝ միջանցքները, ուսումնական կաբինետների, ուսումնա-արտադրական արհեստանոցների, լաբորատորիաների ամբողջություն է: Ուսումնական կաբինետները՝ սկսած նախադպրոցական խմբասենյակից, իրենց ուսուցման թվային միջոցներով, սարքերով և գործիքներով, գործում են որպես մեդիաընթերցարաններ, սովորողների-ուսուցիչների տեխնոլոգիական, այդ թվում՝ մեդիա, հմտությունների ձևավորման արհեստանոցներ: Թվային աստղացուցարանը, թվային աստղադիտարանը, հանրակրթական տեխնոպարկը, գրադարանը, ջերմոցը, կենդանաբանական այգին, տեխնոլոգիական, բնագիտական և այլ լաբորատորիաները, ուսումնա-արտադրական արհեստանոցները ուսումնական տարածքներ են: Արհեստագործական և գեղարվեստի ավագ դպրոցների համար պետական ֆինանսավորմամբ ստացվել են կեպրարվեստի, զարդա-կիրառական արհեստների, ատաղձագործության սարքավորումներ: Դրանք հնարավորություն են տվել նորացնելու ոսկերչական, ատաղձագործական արհեստանոցները, ձևավորելու մոդելավորման, կերպարվեստի, խեցեգործության նոր արհեստանոցներ, Մայր դպրոցի խեցեգործության արհեստանոցն օգտագործելու ուսումնաարտադրական աշխատանքի համար:

Ստեղծվել է տեխնոլոգիայի նոր լաբորատորիան՝ որպես տեխնոլոգիական կրթության ծրագրերի, ուսումնական նախագծերի մշակման կենտրոն: Մշակվել և հաստատվել են նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրերի 2012-2013 ուսումնական տարվա ուսումնական պլանները, ստեղծվել (վերամշակվել) են մասնագիտական ուսուցման մոդուլներ:

6. «Կրթության կազմակերպումը ավագ դպրոցում» գիտափորձի մշակում և ներդրում, այդ թվում՝ անհատական ուսուցման կազմակերպում, կրեդիտային համակարգի մշակում, մասնագիտական փորձառության կազմակերպում, հետազոտական նախագծերի և ինքնակրթության ծրագրերի մշակում

Փորձը ցույց է տվել, որ հիմնական դպրոցի շրջանավարտը դեռ պատրաստ չէ ընտրություն կատարելու. նրան ժամանակ է պետք իր նախասիրություններն ու հետաքրքրությունները ճշտելու համար, և ավագ դպրոցներում կիրառվող հոսքային ուսուցումն ի վիճակի չէ լուծելու այդ խնդիրը: Կրթահամալիրում գործող խորացված ուսուցումը ևս սովորողի անհատական կրթական պատվերի արտացոլումը չէր: Դրանից ելնելով՝ ավագ դպրոցի համար ներդրեցինք 2 տարի + 1 տարի մոդելը, երբ տասը և տասնմեկերորդ դասարանները սովորողին հնարավորություն են տալիս առաջարկվող դասընթացների ընտրությամբ փորձելու և կողմնորոշվելու, իսկ 12-րդ դասարանում սովորողը խորանում է իր ընտրած բնագավառում (այդ թվում՝ մասնագիտական կրթության) և պատրաստվում ավարտական կամ միասնական քննություններին:

Կրթահամալիրի ավագ դպրոցի 2012-2013 ուստարվա ուսումնական պլանը երեք բաղադրիչ ունի՝ ընդհանուր դասընթացներ, սովորողի ընտրությամբ դասընթացներ և ակումբային գործունեություն: Ուսումնական պլանի ընդհանուր բաղադրիչը (10-11-րդ դասարաններում տարեկան միջինը 762 ժամ, 12-րդ դասարանում՝ 748 ժամ ուսումնական ծանրաբեռնվածությամբ) ապահովում է հանրակրթության պետական չափորոշչով որոշված պահանջների կատարումը: Սովորողի ընտրությամբ բաղադրիչը (տարեկան 432-648 ժամ) ապահովում է սովորողի անհատական կրթական պատվերը: Ակումբային բաղադրիչը ապահովում է սովորողի հասարակական շփումը և զարգացումը: Սովորողը ավագ դպրոցի ուսումնական պլանից սահմանված կարգով կազմում է իր անհատական ուսումնական պլանը, կատարելով դասընթացների և ակումբային գործունեության ընտրություն: Անհատական ուսումնական պլանին համապատասխան կազմվում է սովորողի անհատական դասացուցակը: Ուսուցումը կազմակերպվում է առանձին դասընթացների ուսումնական պարապմունքների, մասնագիտական փորձառությունների, սովորողների նախասիրությունների զարգացման ակումբների, ուսումնական այցելությունների, ճամփորդությունների և արշավների, մեդիաօլիմպիադաների, ստուգատեսների (այդ թվում՝ նաև հանրակրթական Դիջիթեք, մեդիափառատոն), օլիմպիական ուսումնահետազոտական ճամբարների, հասարակական նախագծերի միջոցով: Գիտափորձի շրջանակում կմշակվի սովորողի գնահատման կրեդիտային համակարգ՝ ապահովելով դրանց փոխանցումը նախնական և միջին մասնագիտական կրթության համակարգ:

7. Կրտսեր դպրոց-պարտեզում իրականացվող «Իմացումի հրճվանք» ծրագրի բովանդակության բազմաձևության (լեզվագործունեություն, այդ թվում՝ օտար լեզուներ, թվաբանական, բնագիտական-բնապահպանական, տեխնոլոգիական, այդ թվում՝ մեդիա, երաժշտական, այդ թվում՝ պար և նվագարաններ, մարզական, այդ թվում՝

մարմնամարզություն և լող, թափերական) ապահովում՝ ծրագիրը կրող ուսուցչի (դասրիարակի և դասվարի) կարողությունների զարգացման և նրա աշխատանքի կազմակերպման միջոցով:

Դասվարները և դաստիարակները ներառված են մարզական, երաժշտական, տեխնոլոգիական-դիզայներական մասնագիտական որակավորման ծրագրերում:

Դասվարները նախագծել և իրականացրել են 2012-2013 ուստարվա 1-ին դասարանցիների կրթական շքերթը, «Սեբաստացիներ» համույթում մասնակցել են համերգների՝ կրթահամալիրում, Հառիճի նորաբաց ճեմարանում:

Կրտսեր դպրոցականները իրենց դասվարների հետ մասնակցում են կրթահամալիրի ուսումնական օրացույցով որոշված տոներին և նախագծերին՝ սեպտեմբերմեկյան հայրենագիտական նախագծեր, «Մեր ծնունդը գագաթին»՝ սեպտեմբերի քսանմեկի նախագծեր, Կոմիտասի օրեր կրթահամալիրում, աշնանային ստեղծագործական բաց հավաք, Ֆլեշմոբ՝ Ուսուցչի տոնի նվեր: Հիմա պատրաստում են իրենց «Ուսումնական արձակուրդ» նախագծերը:

Կրտսեր դպրոցներում ձևավորվել են 5 տարեկանների ուսուցման նոր կաբինետները՝ որպես, տեխնոլոգիական-մեդի հմտությունների ձևավորման արհեստանոց, մեդիա-ընթերցարան. տարրական կրթության հեղինակային ծրագրի նախապատրաստական ուսուցման (5 տարեկանների) չորս խմբերում սովորում է 95 երեխա: Ուսուցման ծախսերը կատարվում են դպրոցների սովորոների թվով պետական հատկացումներից, խնամքի, սննդի և երկարացված օրվա ծախսերը՝ որպես լրացուցիչ կրթական ծառայություններ, կատարվում են ուսումնառության պայմանագրով որոշված ծնողական վճարների հաշվին:

8. Գործընկեր կազմակերպությունների (ՁԻՀ, ԻՏՁՄ, Յունիքոմփ, Ֆիրմա Ալֆա, Մայքրոսոֆթ-ԱՐԷՅ, Նորք, ԿՏԱԿ, Սինոփսիս) աջակցությամբ «Նոթբուքն ինձ դասընկեր», «Էլեկտրոնային գրատախտակը, պրոյեկտորը, էլեկտրոնային գրիչները հանրակրթական դասարանում», «Ռոբոտիքս», «Էլեկտրոնային կրթահամալիր-կրթական միջավայր» ծրագրերի զարգացում

Կրթահամալիրը Ֆիրմա Ալֆայի միջոցով ձեռք է բերել նոր գործիք՝ Սմարթ Ռեսփոնսը, որը դասավանդողները և ուսուցիչները հիմա յուրացնում են: ՏՏ գործիքները համալրվել են ինտերակտիվ պրոյեկտորով և 9 նոր պրոյեկտորներով: Նոր ուսումնական տարում թվային աստղացուցարանը, աստղադիտարանը օգտագործվում են որպես ուսումնական կաբինետ, «Ես և շրջակա աշխարհը», «Բնագիտություն», «Ֆիզիկա» դասընթացների ծրագրով տիեզերքի նկատմամբ հետաքրքրություն և տիեզերագիտական գիտելիք փոխանցելու համար: Կրթահամալիրի սովորողները և ուսուցիչները շարունակում են ձեռք բերել իրենց անհատական նոթբուք-նեթբուքները, այն հաշվով, որ 2013-ին բոլորը ունենալու են: Կրթահամալիրը ԿԳ նախարարության թույլտվությամբ պատրաստվում է Դասագրքերի շրջանառու հիմնադրամի իր միջոցներով ձեռք բերել թվային ուսուցման նոր գործիքներ և ուսումնական նյութեր:

Կրթահամալիրի դասավանդողները, սովորողները մասնակցել են 8-րդ ամենամյա ԴիջիԹեք էքսպո ցուցահանդեսին, SMART Technologies և «Ֆիրմա Ալֆա» կազմակերպությունների կազմակերպած «smart լավագույն դաս 2012» մրցույթին: ԴիջիԹեք էքսպո 2012 մջազգային տեխնոլոգիական ամենամյա 8-րդ ցուցադրությանը, որտեղ ներկայացվեցին նշված ծրագրերով իրականացվող նախագծերը, այդ թվում՝ հանրակրթական նոր տեխնոպարկ, Դպրոցականների տիեզերագիտական ճամբար «Հայաստան 2013»:

9. Գործընկեր միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների հետ էկոլոգիական կրթության ծրագրերի զարգացում, նախագծերի մշակում և իրականացում

«Հայաստանի արգելոցները» նախագծի իրականացման համար կրթահամալիրի էկոլոգիայի-հայրենագիտության դասավանդողների խումբը դիմեց ՀՀ Բնապահպանության նախարարություն, եղավ ‹‹Արգելոցապարկային համալիր›› ՊՈԱԿ-ում, հանդիպեց տնօրենի հետ: Բնապահպանության նախարարությունը պատրաստ է աջակցելու կրթահամալիրին էկոլոգիական-հայրենագիտական նախագծերի մշակման, հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքներում, դենդրոպարկերում և անտառպարկում էկոկրթական դասընթացների կազմակերպման գործում: Համագործակցությունն առավել արդյունավետ դարձնելու նպատակով կրթահամալիրի էկոլոգ-դասավանդողների խումբը՝ էկոլոգիայի-բնապահպանության ակումբի սովորողների հետ արդեն մշակում է մեկ տարվա համագործակցային աշխատանքային ծրագրի նախագիծը:

Կրթահամալիրի սովորողները սեպտեմբերին եղել են «Որդան Կարմիր» արգելոցում, Իջևանի դենդրոպարկում: «Աշուն» մեդիաօլիմպիադայի շրջանակում մշակվում են նաև ուսումնական արձակուրդի ժամանակ իրականացվող էկոլոգիական-հայրենագիտական նախագծերը:

10. Սովորողների և ուսուցիչների ընտրությամբ՝ վրացերենի, պարսկերենի, թուրքերենի ուսուցման միջոցով միջմշակութային հաղորդակցության զարգացում: Հետազոտական աշխատանքներում ուսուցիչների օտար լեզուներ, այդ թվում՝ անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, գերմաներեն, իսպաներեն, կիրառելու հմտությունների զարգացում

«Հայ-վրացական հանրակրթական կամուրջներ» ծրագրով կրթահամալիրի սովորողների և ուսուցիչների ստեղծագործական խմբերը Թբիլիսիում սեպտեմբերին հաջողությամբ մասնակցել են երկու միջազգային մրցույթի: Վրաստանի խորհրդարանի ազգային գրադարանի, Շոթա Ռուսթավելիի անվան վրացական գրականության ռուսթվելագիտության ուսումնասիրության կենտրոնի, Վրաստանի մանկավարժների եւ գիտնականների ազատ արհմիության հրավերով սեպտեմբերի 18-22-ը կրթահամալիրի Ավագ դպրոցի և Գեղարվեստի ավագ դպրոցի վրացերենի ուսուցման սովորողների խումբը մասնակցել է Շոթա Ռուսթավելու «Վագրենավորը» ստեղծագործության ընթերցումների

ամենամյա մրցույթին: Վրաստանի Ազգային գրադարանում ներկայացված կրթահամալիրային ֆիլմերը արժանացել են «Լավագույն կոմպոզիցիոն նյութեր» մրցանակին: Վագրենավորի մասնակցիները ուսումնական ճամփորդություն են կատարել Ախալցխայի Ռաբաթ ամրոց: Վրաստանյան լրատվամիջոցները հանգամանորեն լուսաբանել են մրցույթը և մեր խմբի մասնակցությունը մրցույթին: Այցի շրջանակում համագործակցության պայմանագրեր է կնքվել, Գանձայի Շոթա Ռուսթավելու անվան թ. 2 դպրոցի և կրթահամալիրի միջև, նախապատրաստվել է «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի և Թբիլիսիի թ. 24 դպրոցի միջև պայմանագիրը, որը կնքվել է 2-րդ՝ «Լեոնարդո Դա Վինչի» մրցույթի մասնակիցների միջոցով:

Սեպտեմբերին ձևավորվել են միջին, ավագ դպրոցների սովորողների ընտրությամբ երրորդ օտար լեզվի ուսուցման խմբերը:

11. Ուսումնահայրենագիտական ճամփորդություններ, արշավախմբային գործունեություն

Կրթահամալիրի սովորողները՝ նախադպրոցականներից մինչև շրջանավարտներ, հեղինակային կրթական ծրագիրը ներկայացրեցին Երևանի զբոսավայրերում, կրթական-մշկութային հաստատություններում, շրջակա գյուղերում: Սեպտեմբերմեկյան ուսումնական-հայրենագիական նախագծով, նախակրթարանները, դպրոցներն ու դասարանները կազմակերպեցին այցելություններ հանրապետության գյուղեր, քաղաքներ, դպրոցներ: Սեպտեմբերի 21-22-ին իրականացվեց «Մեր ծնունդը բարձունքին» նախագիծը, որով կրթահամալիրի 1-12-րդ դասարանցիները խմբերով նվաճեցին Հայաստանի 22 բարձունքներ: Նախագծին արձագանքեցին երևանյան և մազային լրատվամիջոցները: Հաշվետու շրջանում կազմակերպվել է ավելի քան 70 մեկօրյա և բազմօրյա ճամփորդություն:

12. Պարբերական մեդիաօլիմպիադաների և օլիմպիական ճամբարների, «Ուսումնական մեդիաթատրոն» ստուգատեսի, ամենամյա հանրակրթական DigiTec-ի, մեդիափառատոնի կազմակերպում

«Ամառ» մեդիաօլիմպիադայի շրջանակում իրականացվեցին «Ամառային ընթերցանություն», «Ամառային կարաոկե», «Ամառային կինոդիտում» նախագծերը: Երևանում և հանրապետության քաղաքներում, գյուղերում «Դասարան անիվների վրա» նախագծով բաժանված մոտ 30000 գրքերը ամառային ընթերցանության մեջ կարող էին ներգրավել հանրապետության հազարավոր սովորողների: Կրթահամալիրի ակումբները նախապատրաստում են աշնանային օլիմպիական ճամբարը Գանձասարում:

Սեպտեմբերին կազմակերպվեցին ուսումնական օրացույցով նախատեսված Վիկտոր Համբարձումյանի ծննդյան օրվա տոնակատարությունը՝ որպես ուսումնական նախագիծ, «Կոմիտասի օրեր» ստուգատեսը, որի ամփոփումը «Սեբաստացիներ» կրթական հիմնադրամի աջակցությամբ կազմակերպվեց Հառիճում՝ որպես երգի և հայրենագիտության տոն՝ «Ձոն Կոմիտասին»:

13. Սովորողների օժտվածության զարգացման ակումբների գործունեության կազմակերպումը որպես հեղինակային կրթական ծրագրով լրացուցիչ կրթություն («Տիեզերք», «Ռոբոտիքս», ծրագրավորողների, գիտակների, մշակութային, հայրենագետների, «Խաղարկային դատարան»), աստղացուցարանի նախագծի և գործունեության մշակում

Սովորողների օժտվածության զարգացման ակումբները ամռանը իրենց ուսումնական աշխատանքն իրականացրեցին հիմնականում հեռավար: Տարբեր ակումբների պատանիների 60 հոգիանոց խումբը Արցախի ԿԳ նախարարի և«Ասպետ» ռազմա-հայրենասիրական ճամբարի ղեկավարության պաշտոնական հրավերով Ասկերանի Այգեստան գյուղի մոտ հուլիսի 9-19-ը մասնակցեց «Ասպետ» ճամբարին:

2012-2013 ուսումնական տարում ձևավորվել է նաև բանավեճի ակումը: Սեպտեմբերին ակումբները ներկայացրին իրենց նոր նախագծերը, որոնք հրապարակվեցին ԴիջիԹեք Էքսպո 2012 ամենամյա 8-րդ ցուցադրության ժամանակ: Թուրքիայի Իզմիրում կազմակերպվող ՆԱՍԱ-ի միջազգային ճամբարի հրավերով «Տիեզերք» ակումբի 12 սովորողներ հուլիսի 28-ից օգոստոսի 4-ը մասնակցեցին Իզմիրի տիեզերական ճամբարին՝ առիթը օգտագործելով ծանոթանալու քաղաքակրթությունների խաչմերուկ Ստամբուլին, Ստամբուլում հայկական ներկայությանը, այցելելու «Ակոս» թերթի խմբագրություն, լինելու պատմական Հայաստանում՝ Մուշում, Վանում, Անիում, Կարսում: Ակումբն արդեն ստացել է 2013ի իզմիրյան ճամբարի մասնակցության պաշտոնական հրավերը: Սեպտեմբերի 27-29-ին կրթահամալիրի «Տիեզերք» և «Robotics» ակումբների ստեղծագործական խմբերը «Ինքս ինձ ուսուցիչ», «Ռոբոտ Rb-1» և «Robogroup.am սոցիալական ցանց» նախագծերով Թբիլիսիում մասնակցել են Վրաստանի ԿԳՆ և «Ռուսթավելի» կրթական հիմնադրամի կազմակերպած միջազգային նորարարական «Լեոնարդո Դա Վինչի մրցույթին»: Մրցույթին ներկայացված 289 նախագծերից «Ինքս ինձ ուսուցիչ»-ը արժանացել է 2-րդ մրցանակին. սովորողներ Վահե Ղարիբյանը և Արարատ Միդոյանը ստացել են վկայագրեր, արծաթե մեդալներ և դրամական պարգևատրում: Մեր բոլոր սովորողները՝ որպես եզրափակիչ փուլի մասնակիցներ, պարգևատրվել են նոթբուքներով: Վրաստանի «Շոթա Ռուսթավելի» ազգային գիտական հիմնադրամի տնօրեն Սուլխան Սիսաուրին կրթահամալիրին հրավիրել է մասնակցելու 2013թ. մրցույթին. սովորողներն արդեն քննարկում են նոր նախագծերը: «Ռոբոտիքս» ակումբը պատրաստվում է հոկտեմբերի 24-25-ին կազմակերպվող ստեղծագործական հանրապետական մրցույթին: Հոկտեմբերի 23-27-ը Արցախի Մարտակերտի շրջանի Վանք գյուղի դպրոցում և «Գանձասար» ճամբարում կազմակերպվող ստեղծագործական հավաքում կմշակվեն Արցախի պատանիների հետ իրականացվող ռազմահայրենասիրական, տեխնիկական ստեղծագործության, էկոլոգիական-հայրենագիտական համատեղ ուսումնական նախագծեր, կներկայացվի ակումբային աշխատանքի կազմակերպման կրթահամալիրի փորձը, կքննարկվեն խնդիրները:

Կրթահամալիրի 2 սովորողներ՝ Միշա Ավդալյանը և Մանե Գևորգյանը, արժանացել են ՏՏ ոլորտում ՀՀ նախագահի ամենամյա կրթական պարգևին:

14. Սովորողների և դասավանդողների ներհայաստանյան և միջազգային փոխանակման ծրագրերի, պարբերական առցանց քննարկումների, հետազոտող ուսուցիչների ամենամյա մայիսյան, հոկտեմբերյան ստեղծագործական, բաց հավաքների կազմակերպում: Մեդիատեխնոլոգիական հանրակրթության գործընկեր դպրոցների ցանցի, այդ դպրոցների համար ուսումնական փաթեթի ստեղծում, ղեկավարների և դասավանդողների վերապատրաստում

«Դասարան անիվների վրա», սետպեմբերմեկյան նախագծերով կրթահամալիրի սովորողները եղել են հանրապետության մի քանի տասնյակ դպրոցներում՝ այդ թվում հեռավոր, սահմանային գյուղերում, հեղինակային կրթական ծրագիրը ներկայացնելով հանդիպումների ժամանակ և բաժանվող ուսումնական գրականության միջոցով: Վայոց ձորի մարզպետարանի կրթության վարչության հետ մշակվում է կրթական համագործակցության՝ «Ստեղծողի դպրոց. անհատի կրթական պատվեր. մեդիակրթություն» գյուղական փոքրաքանակ դպրոցի մոդելի ստեղծման նախագիծ:

Հաստատված ծրագրով և աշխատակարգով կազմակերպվեց հեղինակային կրթական ծրագրի աշնանային ամենամյա 7-րդ ստեղծագործական հավաքը, որով ներկայացվեցին 2012-2013 ուսումնական տարում իրականացվող կրթական ծրագրերի խդիրները, նախագծերը: Հավաքին մասնակցում էին ԼՂՀ ԿԳՆ պաշտոնական պատվիրակությունը, մանկավարժական աշխատողներ հանրապետության նախադպրոցական և հանրակրթական հաստատություններից: Հավաքին ներկայացվող հոդվածները հրապարակվեցին «Դպիր» էլեկտրոնային ամսագրի 61, 62-րդ համարներում, նյութերը՝ mskh.am-ում, սոցիալական կայքերում: Հեղինակային կրթական ծրագրի տեղայնացման և կրթահամալիրի փորձի փոխանցման նպատակով ստեղծագործական հավաքն ամփոփող կլոր սեղանները կազմակերպվեցին հանրապետություն 12 կրթական հաստատություններում՝ որպես կրթահամալիրի դպրոցի, դասավանդողների և սովորողների խմբերի ուսումնական նախագծեր: Կլոր սեղանները հյուրընկալող կրթական հաստատությունների հետ ծրագրվում է հետագա համագործակցությունը:

Շարունակվում է համագործակցությունը ԼՂՀ ԿԳՆ հետ՝ կրթահամալիրի մանկավարժական աշխատողները պատրաստվում են հոկտեմբերի 23-27-ը կազմակերպել Ստեփանակերտի դասվարների վերապատրաստում «Նոթբուքն ինձ դասընկեր» ծրագրով:

Կրթահամալիրը պատրաստ է իր փորձը փոխանցելու և աջակցելու բոլոր այն հաստատություններին, որոնց կառաջարկեն ԿԳ նախարարությունը, Երևանի և մարզային կրթության վարչությունները:

15. Աջակցություն կրթահամալիրի՝ որպես մեդիահանրակրթության և տեխնոլոգիական կրթության այլընտրանքային (հեղինակային) արդյունավետ համակարգի պահպանությանը

(մանկավարժության կենտրոն և մանկավարժական էլեկտրոնային «Դպիր» պարբերական, ուսումնական կայք (այդ թվում՝ ինտերնետային TV, ինտերնետ ռադիո, թարգմանչական լրատվական գործակալություն, Վիքիպեդիայի խմբագրություն), մեդիագրադարան, մեդիահրատարակչատուն, մեդիատպագրություն

Հուլիս-սեպտեմբեր ամիսներին mskh.am-ը պահպանել է իր առաջատար դիրքը հայկական կրթական և գիտական վեբ կայքերի մեջ: Հաշվետու շրջանում ստեղծվել է հինգ նոր ենթակայք, հրապարակվել են «Դպիր» էլեկտրոնային ամսագրի 60-62-րդ համարները, «Լուսատղ», «Պարտեզ»: TV mskh-ը թողարկել է 46 հաղորդում: Մեդիահրատարկչությունը թվայնացրել է մոտ 40 կտոր ուսումնական գրականություն՝ դասագիրք և գիտահանրամատչելի, գիտաֆանտաստիկ, գեղարվեստական ստեղծագործություններ, հրապարակել այլոց կողմից թվայնացված ուսումնական գրականություն՝ մոտ 60 գիրք, ուսումնական նյութեր, այդ թվում՝ աուդիո-տեսանյութեր:

16. Աջակցություն կրթահամալիրում իրականացվող նախադպրոցական այլընտրանքային կրթության ծրագրին. 2-3, 3-4, 4-5 տարեկան երեխաների նախակրթարանային խմբերի պահպանում, 2007թ. ծնված երեխաների՝ կրթահամալիրի կրտսեր դպրոցին նախապատրաստական ուսուցման կազմակերպում, հանրապետության նախադպրոցական հաստատությունների ղեկավար և մանկավարժական աշխատողների վերապատրաստում, ծրագրային նյութերի և վերապատրաստման մոդուլների հրատարակում, ՀՀ ԿԳՆ սահմանած կարգով ներկայացում, «Պարտեզ» էլեկտրոնային կայքի պահպանում

Ամռան ամիսների կրթահամալիրի նախակրթարաններում կազմակերպվել են ամառային պարտեզ-ճամբարները՝ իրենց բաց լողավազաններով:

2012թ. սեպտեմբերին կրթահամալիրի նախակրթարաններում սահմանված կարգով գործում են 8 խմբեր, հաճախում է 2-4 տարեկան 187 սան:

Հուլիս-օգոստոսին հեռավար և առցանց քննարկման արդյունքում լրամշակվել ու հրապարակվել են նախադպրոցական կրթության հեղինակային ծրագիրը, 2-4 տարեկանների խնամքի և զարգացման, 5 տարեկանների նախապատրաստական ուսուցման խմբերի ուսումնական պլանները՝ պարզաբանումներով, դրանցով որոշված կարգերը, նոր ուսումնական նյութեր: Մշակվել, իրականացվել, «Պարտեզ» ամսագրում և դպրոց-պարտեզների ենթակայքերում լուսաբանվել են «Ամառային պարտեզ» և «Աշնանային պարտեզ» ծրագրերը: Նախակրթարանները աշնանային հավաքի ծրագրով կազմակերպեցին իրենց կլոր սեղանը Աշտարակի թ. 3 նախադպրոցական ուսումնական հաստատությունում: Դաստիարակներն ու սաները մասնակցեցին «Կոմիտասյան օրեր» ստուգատեսին, միջազգային Դիջիթեք էքսպո 2012-ին:

Ծրագրի ընթացքին և առկա արդյունքներին մանրամասն կարող եք ծանոթանալ mskh.am-ում և ենթակայքերում:

Կրթահամալիրի տնօրեն՝ Աշոտ Բլեյան

Ծրագրերի կենտրոնի ղեկավար՝ Սուսան Մարկոսյան